

## ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎԵՑ ՆՈՐ՝ ՀՈՎՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Ս. Ծննդյան տոներից հետո, ակտիվ քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Ս. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կողմից կյանքի կոչվեց Հովվական Գործունեության Համակարգող Գրասենյակը (ՀԳՀԳ):

Գրասենյակի գործունեության նպատակն է՝ թեմերում ծավալել ակտիվ քարոզչություն եւ, որպես քարոզիչ-օժանդակողներ, ներգրավել Մայր Աթոռի միաբաններին: Գրասենյակի տնօրեն է նշանակվել Ս. Արշեն արեղա Սամոսյանը:

Գրասենյակի գործունեության ոլորտն է հանդիսանում հովիվ-հոտ, հոգևորական-ժողովուրդ հարաբերության սերտացումը, քարոզչական օրինական բոլոր միջոցների օգտագործումը եւ հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմության եւ քրիստոնեական վարդապետության դասավանդման կազմակերպումը:

Գրասենյակի խնդիրներից մեկն էլ խիստ կարիքավոր ընտանիքներին օգնություն եւ նպաստ տրամադրելն է:

Ուժերն առավել նպատակային օգտագործելու համար կազմակերպվեցին խմբեր, որոնց պայմանականորեն տրվեցին հետեւյալ անունները.

Մայր Աթոռ (խմբի ղեկավար՝ Ս. Միքայել ծ. վրդ. Աջապահյան, անդամներ՝ Ս. Արտակ արեղա Տիգրանյան, Ս. Աշոտ արեղա Մնացականյան, Ս. Արշակ արեղա Խաչատրյան),

Գեորգյան Հոգեւոր Դեմարան (ղեկավար՝ Ս. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, անդամներ՝ Ս. Բարկեմ արեղա Մարիյան եւ Հոգեւոր Դեմարանի սարկավագներ),

ԶԴԶԿ (ղեկավար՝ Ս. Վազգեն վրդ. Միրզախանյան, անդամներ՝ Ս. Զարեհ արեղա Կաբաղյան եւ ԶԴԶԿ-ում աշխատող սարկավագներ),

Արարատյան Հայրապետական թեմ (ղեկավար՝ Ս. Թորգոմ արեղա Տոնիկյան, անդամներ՝ թեմի քահանաներ եւ սարկավագներ),

Արմավիրի թեմ (ղեկավար՝ Ս. Խորեն քհն. Մարուքյան, անդամներ՝ թեմի քահանաներ եւ սարկավագներ):

Այս խմբերն ամեն կիրակի քարոզչական աշխատանքներ են ծավալում Արմավիր, Մեծամոր քաղաքներում, Ջանֆիդա, Մրգաշատ եւ Նոր Արմավիր գյուղերում: Տեղերում կազմակերպվում են հանդիպումներ ժողովրդի հետ, ներկայացվում Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը, մեր ժողովրդի ավանդությունները, քննարկվում են ժողովրդին հուզող բազմաթիվ հարցեր, բաժանվում հոգեւոր գրականություն՝ Աստվածաշունչ Մատյան, ԶԴԶԿ-ի կողմից հրատարակված պարզ, բացատրական թերթոններ ու գրքույկներ, ինչպես նաեւ այլ հրատարակությունների կողմից լույս ընծայված գրքեր թե՛ մեծահասակների եւ թե՛ մանուկների համար:

Մրգաշատ գյուղի եկեղեցում ամեն կիրակի եւ տոն օրերին մատուցվում է Ս. Պատարագ, իսկ մյուս վայրերում, ուր չկան եկեղեցիներ, կատարվում են

ժամերգություններ, ընդհանրական աղոթքներ: Զարոզյական նպատակներով ցուցադրվում են հոգեւոր թեմաներով տեսաֆիլմեր: Կազմակերպվում են նաեւ համերգներ՝ Արարատյան Հայրապետական թեմի Հայրորդաց տների գեղարվեստական, երգի-պարի համույթների մասնակցությամբ: Տեղերում ստեղծվում են երգի եւ պարի խմբեր:

Հանդիպումներ են կազմակերպվում նաեւ աղանդավորական տարրեր խմբերի հետ:

Մարզային իշխանությունների գիտությամբ եւ անմիջական օգնությամբ, հանրակրթական դպրոցներում կդասավանդվի Հայ Եկեղեցու պատմություն, որը կիրականացնեն ԶԴԶԿ-ի կողմից վերապատրաստված կրոնի շուրջ 45 ուսուցիչներ:

Զարոզյական նպատակներով գրասենյակը համագործակցում է նաեւ մարզի լրատվական միջոցների, հատկապես՝ Արմավիրի «Ալտ» եւ Էջմիածնի «Էջմիածին» հեռուստաընկերությունների, ինչպես նաեւ մարզային «Արմավիր» թերթի եւ մարզպետարանի լրատվական բաժնի հետ:

**ԱՐՇԵՆ ԱՐԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ**